«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
2019Թ. ՄԱՅԻՍԻ 11-Ի ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 21

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ) Հոգաբարձուների խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ.Սևակ փ., 4 հասցեում, ՇՊՀ շենքում:

Նիստին ներկա էին 24 հոգաբարձուներից 20-ը.

1. Լուսինե Առաքելյան, ՀՀ ԿԳ փոխնախարար
2. Սոֆիա Հովսեփյան, ՀՀ ԱԺ պատգամավոր
3. Կարեն Սարուխանյան, ՀՀ ԱԺ պատգամավոր
4. Լևոն Բարսեղյան, ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի տնօրեն
5. Սեյրան Մարտիրոսյան, «Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ի Շիրակի մասնաճյուղի ղեկավար;
6. Գայանե Շագոյան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող:
7. Կարեն Ավագյան՝ Գյումրու ավիամոդելային խմբակի ղեկավար
8. Խաչատուր Իսրայելյան, ՇՊՀ գործարարության և վարչարարության ամբիոնի դասախոս
9. Նաշիկ Հարությունյան, ՇՊՀ մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոնի դոցենտ
10. Էվելինա Մաթևոսյան, ՇՊՀ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
11. Արտուշ Խաչատրյան, ՇՊՀ ֆիզիկական դաստիարակության, տեսության և մեթոդիկայի ամբիոնի դասախոս:
12. Գրիգոր Բարսեղյան, ՇՊՀ ֆիզիկական դաստիարակության, տեսության և մեթոդիկայի ամբիոնի դասախոս:
13. Աիդա Գարեգինյան, ՇՊՀ ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դեցենտ
14. Օվսաննա Թերզիբաշյան, ՇՊՀ մանկավարժության ֆակուլտետի մանկավարժություն և մեթոդիկա բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
15. Ռիմա Խաչատրյան, ՇՊՀ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժնի 4-րդ կուսի ուսանողուհի
16. Մառա Հարությունյան, ՇՊՀ սոցիալական գիտություններին իրավունքի ֆակուլտետի և հոգեբանության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի:
17. Սվետլանա Հովհաննիսյան, ՇՊՀ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտատի ռուսաց լեզվի և գրականության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի:
18. Անուշավան Սարգսյան, ՇՊՀ ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստության բաժնի 4-րդ կուրսի ուսանող:
19. Ռիմա Պողոսյան, ՇՊՀ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի կառավարում բաժնի 2-ին կուրսի ուսանողուհի
20. Սուրեն Մանուկյան , «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի» Համեմատական ցեղասպանագիտության բաժնի վարիչ

Հարգելի պատճառով բացակայում էին.

21. Հայկակ Արշամյան, Համահայկական հիմնադրամի տնօրեն

22. Գևորգ Պետրոսյան , «Բիոսոֆիա» ՀԿ ղեկավար

23. Ամալյա Ենգոյան , ՀՀ վարչապետի աշխատակազմի ԱԺ հետ կապերի վարչության նախկին պետ, (Ներկա աշխատավանքի վայրն հայտնի չէ):

24. Ռոբերտ Սուքիասյան, ՀՀ ԿԳՆ աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ

Շիրակի Պետական Համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահը ներկայացրեց, որ Հոգաբարձուների խորհրդի նիստի մասին պատշաճ իրազեկվել են ՇՊՀ ՀԽ անդամները, զեկուցեց քվորումի առկայության մասին և բացեց նիստը:

Հոգաբարձուների Խորհրդի նախագահ պարոն Բարսեղյանը ողջունեց հոգաբարձուներին , նիստին ներկա քաղաքացիներին և լրագրողներին , ներկայացրեց ներկաներին , ծանոթացրեց քննարկվելիք օրակարգի նախագծին, որի առաջին կետը վերաբերում էր ՇՊՀ ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթին և երկրորդ հարցը՝ Գյումրու Ակադեմիական վարժարանի դիմումի քննարկումը:

Օրակարգի նախագիծ.

1. **ՇՊՀ ռեկտորի թափուր պաշտոնի տեղակալման մրցույթի անցկացում**

ա) ՇՊՀ ռեկտորի թափուր պաշտոնի տեղակալման մրցույթին հայտ ներկայացրած հավակնորդներից կազմից թեկնածուների հաստատում:
բ) Թեկնածուների ծրագրերի ներկայացում: Ներկայացման հերթականությունը որոշվում է վիճակահանությամբ:
գ) Թեկնածուներին հղվող հարցեր եւ պատասխաններ:
դ) ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամների ելույթներ եւ քննարկում հոգաբարձուների շրջանակում:
ե) Թեկնածուների եզրափակիչ ելույթներ:
զ) Հաշվիչ հանձնաժողովի ձևավորում:
է) Ռեկտոր ընտրելու նպատակով գաղտնի քվեարկություն:
ը) Ռեկտորի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

2. **Այլ հարցեր**

1. **Ակադեմիական վարժարանի դիմումի քննարկում**

Առաջարկեցին՝ Պարոն Բարսեղյանն առաջարկեց հաստատել օրակարգը եթե այլ առաջարկություններ չկան:

Որոշեցին՝ Հաստատել ներկայացված օրակարգը:

Քվեարկեցին. Կողմ 19 Դեմ 0 Ձեռնպահ 0

Օրակարգն հաստատվեց :

Լսեցին. Պարոն Բարսեղյանը նշեց ,որ տեխնիկական խնդրի պատճառով առայժմ հնարավոր է համացանցային հեռարձակում իրականացնել ՇՊՀ ֆեյսբուքյան կայքով ,մինչև հնարավոր լինի յութուբյան հեռարձակման հարցը ևս կարգավորել ,ուստի առաջարկեց ՇՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգում կատարել համապատասխան փոփոխություն:

Որոշեցին՝ Կանոնակարգի 4,1 կետում կատարել փոփոխություն՝ Համացանցում հեռարձակումն իրականացնել ֆեյսբուքյան էջի միջոցով ,իսկ հնարավորության դեպքում նաև Youtube.com –ի տիրույթում:

Քվեարկեցին՝ Կողմ 19 Դեմ 0 Ձեռնպահ 0

Հղումները ստորև. . .
https://web.facebook.com/shirakstateuniversity/videos/512756135924032/

https://www.youtube.com/watch?v=Dh7DSWAyMTw&fbclid=IwAR3lhJ8VZQj3EU62PHh6H6Rqs36xM4cdIVUsMuuN8sLOX4zlaBG_5nvItjg

Լսեցին. Պարոն Բարսեղյանը ներկաներին ներկայացրեց նախորդ նիստի արդյունքներին ,որի ընթացքում որոշվել էր ռեկտորի թափուր պաշտոնի տեղակալման մրցույթի մասնակցության հայտ էին տվել 6 հայտատու: Որոշումը ընդունվել գրանցել երեք թեկնածու ,ևս մեկ թեկնածուի հայտունակության հստակեցման համար նամակ էր ուղարկվել ԿԳՆ: Ստացվել էր դրական պատասխան ,ստորագրված ԿԳՆ փոխնախարար պարոն Գ. Թամրազյանի ստորագրությամբ ,ըստորի Անդրանիկ Սարգսյանն համարվում է հայտունակ: Այնուհետև պարոն Լ. Բարսեղյանի առաջարկով անցկացվել է ինտերնետային քվեարկություն էլեկտրոնային նամակագրության միջոցով ,որտեղ հավաքելով անհրաժեշտ 13 ձայն Ա. Սարգսյանն հայտարարվել է թեկնածու ,նրաինքնակենսագրությունը և հայեցակարգը ևս տեղադրվել են ՇՊՀ կայքում,որտեղ տեղադրված էին նախօրոք հաստատված երեք թեկնածուների ինքնակենսագրականներն ու հայեցակարգերը (Ինքնակենսագրականներն ու հայեցակարգերն հրապարակված են հետևյալ հղմամբ և կարելի է ներբեռնել http://shsu.am/rector-candidates/):

Առաջարկեցին՝ Պարոն Լ. Բարսեղյանն առաջարկեց հոգաբարձուների խորհրդին հաստատել 4 թեկնածուների թեկնածությունները որպես ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցներ:

Որոշեցին՝ հաստատել Ս. Ալեքսանյանին,Ա. Կարապետյանին , Ա. Սարգսյանին և Լ. Ֆլջյանին որպես ՇՊՀ ռեկտորի թեկնածու և թույլատրել մասնակցել մրցույթին:

Քվեարկեցին՝ Կողմ 19 Դեմ 0 Ձեռնպահ 0

Այնուհետև անցկացվեց վիճակահանություն,որով որոշվելու էր թեկնածուների ելույթների հերթականությունը: Վիճակահանությամբ արկղից հանվեցին թերթիկներ ,որոնց վրագրված էին 4 թեկնածուների անունները:

1. Սարգսյան Անդրանիկ
2. Սամվել Ալեքսանյան
3. Լուսինե Ֆլջյան
4. Արամ Կարապետյան

Պարոն Բարսեղյանն առաջարկեց հաստատել վիճակահանությամբ ընտրված հերթականությամբ ելույթների հերթականությունը:

Քվեարկեցին: Կողմ 19: Դեմ և ձեռնպահ չկար;

Այնուհետև ելույթների համար խոսքը տրվեց թեկնածուներին, յուրաքանչյուրին 30 րոպե, որից հետո կարող են հարցեր տրվել թեկնածուներին:

Ելույթունեցավ Ա. Սարգսյանը, որը ներկայացրեց ԾՊՀ զարգացման իր հայեցակարգը:

Ելույթն առկաէ ԾՊՀ կայքում, սկսվում է տեսանյութի 16-րդ րոպեից մինչև 46-րդ րոպեն: Տեսաձայնագրությունը կցվում է սույն արձանագրությանը DVD կրիչով: Այնուհետև թեկնածուին հարցեր տվեցին հոգաբարձուներ Ս.Մարտիրոսյանը, Կ.Ավագյանը, Լ.Բարսեղյանը, Ս.Մանուկյանը :

Այնուհետև հայտարարվեց տեխնիկական ընդմիջում, յութուբյան հեռարձակման կարգավորման համար :

Ընդմիջումից հետո հայեցակարգը ներկայացրեց պարոն Սամվել Ալեքսանյանը: Վերը տեղադրված յութուբյան հղումում նրաելույթն արդեն առկաէ :

Ելույթից հետո թեկնածուին հարցեր տվեցին հոգաբարձուներ Լ.Առաքելյանը, Գ.Շագոյանը, Ս.Հովսեփյանը, Լ.Բարսեղյանը, դահլիճում ներկաներից դասախոս Վ.Մելքոնյանը:

Այնուհետև խոսքը տրվեց տիկին Լուսինե Ֆլջյանին : Ելույթի հղումը՝ https://youtu.be/Dh7DSWAyMTw?t=1931

Ելույթից հետո հարցեր ուղղեցին հոգաբարձուներ Ս. Մարտիրոսյանը, Լ. Բարսեղյանը համալսարնի աշխատակցուհի Մերի Աղաբաբյանը, ավագ դպրոցի ուսուցիչ Արմեն Մելքոնյանը:

Հայտարարվեց ընդմիջում 30 րոպե:

Ընդմիջումից հետո իր հայեցակարգը ներկայացրեց պարոն Արամ Կարապետյանը: Պարոն Կարապետյանի ելույթը ևս հեռարձակվել է յութուբով: Հայեցակարգի ներկայացումը տևեց 30 րոպե, որից հետո հարցեր ուղղեցին հոգաբարձուները: Նշվեց, որ պարոն Կարապետյանի ներկայացրած հայեցակարգում բացակայում էին հղումները:

Ելույթներից հետո բոլոր 4 թեկնածուներին հարցեր տվեցին հոգաբարձուները, այնուհետև միմյանց հարցեր ուղղեցին հենց թեկնածուները: Հարցուպատասխանի հղումը նույն վերը նշված յութուբյան էջում:

Քվեարկության անցնելուց առաջ ՀԽ նախագահ պարոն Բարսեղյանն, ըստ կանոնակարգի պահանջի հարցրեց բոլոր թեկնածուներին ինքնաբացարկի մասին: Ոչ մի թեկնածու ինքնաբացարկ չհայտնեց: Պարոն Բարսեղյանն ուշադրություն հրավիրեց որ քվեարկությունից առաջ ընթերցվելու է քվեարկության

Այնուհետև հոգաբարձուներից կազմվեց հաշվիչ հանձնաժողով: Ըստ ընթացակարգի հաշվիչ հանձնաժողովի կազմում ընդգրկվեցին Գրիգոր Բարսեղյանը, Լուսինե Առաքելյանը, Անուշավան Սարգսյանը և Սվետլանա Հովհաննիսյանը:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ ընտրվեց Գրիգոր Բարսեղյանը։

Կազմվեցին քվեաթերթիկներ , որտեղ նշված էին բոլոր 4 թեկնածուներն առանձին տողերում , «բոլորին դեմ» և «անվավեր» տողերը։ Տպագրվեցին քվեաթերթիկներ , որոնց հետևի մասում ստորագրեցին հաշվիչ հանձնաժողովի անդամները : Այնուհետև , մեկ առ մեկ , հոգաբարձուները

Օրակարգի երկրորդ հարց. **Այլ հարցեր**

2. Ակադեմիական վարժարանի դիմումի քննարկում

Լսեցին : Պարոն Սերոբյանը ներկայացրեց ԿԳՆ փոխնախարար պարոն Գրիշա Թամրազյանի կողմից ՇՊՀ-ին վերահասցեագրված Գյումրու ակադեմիական վարժարանի տնօրեն Լ. Սեխպոսյանի դիմումը , որով խնդրվել էր նախարարությունից օգնել երկու տարով շենքի տրամադրման հարցում , նկաբի ունենալով Գյումրու մանկավարժական ուսումնարանի նախկին շենքը :

Պարոն Սերոբյանը ներկայացրեց , որ Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան փողոցի 28 ,28/1 և 28/2 հասցեներում տեղակայված շինությունները հանդիսանում են ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետգույքի կառավարման կոմիտեի սեփականությունը , որոնք ՇՊՀ հիմնադրամին հանձնվել են անհատույց օգտագործման։

ՇՊՀ կանոնադրության 20-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայնհիմնադրամին օգտագործման իրավունքով հանձնված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել 1 տարուց ավելի, բացառությամբ հիմնադիրի կողմից սահմանված դեպքի :

Արտահայտվեցին. Պարոն Սերոբյանինև տնտեսական բաժնի պետ Ս. Մինասյանին հարցեր տվեցին հոգաբարձուներ Է. Մաթևոսյանը , Գ. Շագոյանը , Աիդա Գարեգինյանը , Ս. Մանուկյանը Կ. Ավագյանը , ՀԽ Նախագահ Լ. Բարսեղյանը ։

Պարոն Բարսեղյանն առաջարկեց , որ ռեկտորի պաշտոնակատարը ուսումնասիրի և ներկայացնի նաև նույն հասցեներում տեղակայված հանրակացարանի օգտագործման հնարավորությունը։ Սուրեն Մանուկյանը կասկածեց , որ դա արագ կլինի և կարող է ձգվել ավելի քան երկար։ Սեյրան Մարտիրոսյանը նշեց , որ Ակադեմիական վարժարանը լավ կրթական հաստատություն է , իսկ օգնելով այդ հաստատությանը կարող է նոր ուսանողների հոսք ապահովել ։ Նաև առաջարկեց կիրառել «բաց դռների օր» միջոցառմանը նման այլ միջոցառումներ նման առաջադեմ հաստատություններում։

Պարոն Լ. Բարսեղյանն առաջարկեց լրացնել շենքը տրամադրելու մասին որոշումը , հետևյալ պարբերությամբ՝ «. . . նաև հանձնարարելով , որ ուսումնասիրել այդ հասցեներում տեղակայված մյուս շենք շինությունների օգտագործման հնարավորությունը , ներկայացնել առաջարկներ այդ մասին , հաշվարկներ , նախահաշիվներ» ։

Հարցրեց նաև , թե ուսումնասիրելու համար ինչ ժամանակահատված է առաջարկվում , որպեսզի ավելի առարկայական լինի խնդիրների լուծում գտնել։

Առաջարկվեց մինչև հունիսի 30-ը կազմել այդ առաջարկները։

Որոշեցին՝ համաձայնվել երկու տարով շենքը տրամադրելու նախարարության առաջարկին , հաշվի առնելով նաև կանոնադրության 20-րդ կետի տասնչորս ենթակետի պահանջները՝ երկու տարով պայմանագիր կնքելու իրավասությունը տրամադրելով հիմնադիրին ։Նաև հանձնարարել ռեկտորի ԺՊ պարոն Սերոբյանին՝ մինչև հունիսի 30-ը կատարել ուսումնասիրություններ և ներկայացնել առաջարկներ մնացած չօգտագործվող տարածքները օգտագործելու հնարավորությունների մասին։

Քվեարկեցին Կողմ 19 դեմ 0 ձեռնպահ 0։ (Քվեարկությանը չէր մասնակցել Ս. Հովսեփյանը)

Որոշումն ընդունվեց ։